1. **Ակցիայի անվանումը՝** ՛ԿԻՆՈԺԱՄ՛ (այսուհետ՝ ՛Ակցիա՛)։

2. **Ակցիայի կազմակերպիչ՝** ՛Մաստեր ԷՑԴԻՎԻ՛ ՍՊԸ, Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձ,
ՀՎՀՀ 00091008, Հասցե՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 5, ՀՀ (այսուհետ՝ Կազմակերպիչ)։

3. **Ակցիայի գործողության ժամկետը՝** սկիզբ՝ 2018թ.-ի մարտի 1, ավարտ՝ 2018թ.-ի ապրիլի 7 կամ թվով 450 (չորս հարյուր հիսուն) Նվերի ստացումը՝ սույն կանոններով սահմանված կարգով (այսուհետ՝ Ակցիայի գործողության ընթացք)։

4. **Ակցիայի նպատակը՝** խթանել Mastercard® և Maestro® քարտերով անկանխիկ գնումների կատարումը։

5. **Ակցիայի անցկացման վայրը՝** Հայաստանի Հանրապետություն (այսուհետ՝ Ակցիայի տարածք)։

6. **Ակցիայի մասնակիցը՝** Հայաստանի Հանրապետությունում գործող որևէ բանկի կողմից թողարկված Mastercard® և/կամ Maestro® քարտերի միևնույն քարտապանի քարտով Ակցիայի գործողության ընթացքում ՀՀ տարածքում և/կամ արտերկրում առնվազն 4 (չորս) գնումը, բայց ոչ պակաս, քան ՀՀ տարածքում կատարված յուրաքանչյուր գնումը 8,000 (ութ հազար) ՀՀ դրամ արժեքով, իսկ արտերկրում՝ ցանկացած արժեքով կատարված գնման դեպքում, հավաստող կտրոններ ներկայացնող չափահաս ֆիզիկական անձը (այսուհետ՝ ՛Մասնակից՛)։ Միևնույն Մասնակիցը կարող է մասնակցել Ակցիային անսահմանափակ քանակությամբ։

7. **Ակցիայի նկարագրությունը՝** 2018 թ.-ի մարտի 10-ից մինչև 2018թ.-ի ապրիլի 8-ը նվերների հանձնման կենտրոններից որևէ մեկի աշխատակցին տվյալ կենտրոնի աշխատանքային օրը և ժամին ներկայացած առաջին 450 (չորս հարյուր հիսուն) Մասնակիցը ստանում է երևանյան կինոթատրոններից որևէ մեկում 2 անձի համար կինոնկարի դիտման տոմսի հավաստագիր՝ հավաստագրով սահմանված պայմաններով Մասնակցի կողմից ընտրված ֆիլմի դիտման հնարավորությամբ (այսուհետ՝ Նվեր)։ Ակցիան չի տարածվում համացանցով /ինտերնետով/ առցանց (online) եղանակով կատարված գնումների վրա։

8. **Նվերների հանձնման կենտրոններ՝**

    8.1. **Dalma Garden Mall**, հասցե՝ ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 3, ՀՀ, աշխատանքային օրը և ժամը՝ մարտի 10-ից ապրիլի 8-ը յուրաքանչյուր շաբաթ և կիրակի 12:00-20:00։ Նվերների հանձնման պրոմո ստենդը տեղադրված կլինի Cinema Star-ի հարևանությամբ։

    8.2. **Yerevan Mall**, հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 34/3, ՀՀ, աշխատանքային օրը և ժամը՝ մարտի 10-ից ապրիլի 8-ը յուրաքանչյուր շաբաթ և կիրակի 12:00-20:00։ Նվերների հանձնման պրոմո ստենդը տեղադրված կլինի Kino Park-ի հարևանությամբ։

9. Նվերի ստացումը՝ Նվերը ստանալու համար Մասնակիցը պետք է ստորագրի Նվերի ստացման փաստը հավաստող համապատասխան փաստաթուղթ և Նվերների հանձնման կենտրոնի աշխատակցի պահանջով ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ զին. գրքույկ)։